

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Մասնավոր պահնորդական գործունեության մասին

Սույն օրենքը սահմանում է մասնավոր պահնորդական գործունեության իրավական հիմքերը, սկզբունքները, խնդիրները, պետական եւ այլ մարմինների հետ համագործակցության կարգը, կարգավորում է այդ գործունեության իրականացման ընթացքում ծագող հարաբերությունները:

ՀՈՂԿԱԾ 1. ՕՐԵՆՔԻ ԳՈՐԾՈՐԴՈՒԹՅԱՆ ՈՒՈՐՏԸ

1. Սույն օրենքի գործողությունը տարածվում է Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացվող թիկնապահական եւ պահնորդական գործունեության վրա:
2. Հայաստանի Հանրապետության տարածքում թիկնապահական եւ պահնորդական գործունեությամբ զբաղվելու իրավունք ունեն միայն սույն օրենքով սահմանված կարգով լիցենզիա ստացած իրավաբանական անձինք:

ՀՈՂԿԱԾ 2. ՕՐԵՆՔՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Սույն օրենքում օգտագործվում են հետեւյալ հիմնական հասկացությունները.

մասնավոր պահնորդական գործունեության` ոչ պետական կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձանց կողմից սույն օրենքով սահմանված թիկնապահական եւ (կամ) պահնորդական գործունեության իրականացում.

*թիկնապահական եւ պահնորդական գործունեություն`* լիցենզավորման ենթակա գործունեություն, որն իրականացվում է պայմանագրային (վճարովի) հիմունքներով, ոչ պետական կազմակերպության կողմից` ֆիզիկական եւ իրավաբանական անձանց թիկնապահական եւ պահնորդական ծառայություններ մատուցելու նպատակով.

թիկնապահական եւ պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպություն` թիկնապահական եւ պահնորդական գործունեություն իրականացնելու լիցենզիա ստացած ոչ պետական կազմակերպություն.

թիկնապահ` պաշտպանվող անձի կյանքի եւ առողջության պաշտպանություն իրականացնելու համար սույն օրենքով նախատեսված որակավորում ունեցող, թիկնապահական եւ պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպությունում պայմանագրային հիմունքներով աշխատող եւ կանոնադրական խնդիրներ իրականացնող ֆիզիկական անձ,

պահնորդ` պահպանվող օբյեկտների մշտական եւ ժամանակավոր գտնվելու վայրերի շենքերի, շինությունների, կառույցների, դրանց հարող տարածքների, տրանսպորտային միջոցների պաշտպանություն իրականացնելու համար սույն օրենքով նախատեսված որակավորում ունեցող, թիկնապահական եւ պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպությունում պայմանագրային հիմունքներով աշխատող եւ կանոնադրական խնդիրներ իրականացնող ֆիզիկական անձ.

պաշպանվող անձ` թիկնապահական եւ պահնորդական գործունեություն իրականացնող ոչ պետական կազմակերպության հետ իր կամ պայմանագրում նշված անձանց կյանքի եւ առողջության պաշտպանություն իրականացնելու վերաբերյալ վճարովի հիմունքներով պայմանագիր կնքած ֆիզիկական անձ.

պահպանվող օբյեկտ` թիկնապահական եւ պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպության եւ պատվիրատուի միջեւ կնքված պայմանագրի համաձայն պահպանության ենթակա գույք (տարածք).

թիկնապահական եւ պահնորդական ծառայություններ` պաշտպանվող անձանց եւ պահպանվող օբյեկտների պաշտպանությունն ու անվտանգությունն ապահովող գործողությունների ամբողջությունն.

անցագրային պայմանակարգ` պահպանվող օբյեկտ մուտքի եւ ելքի համար սահմանված կարգ, որն ապահովում է անձանց եւ տրանսպորտային միջոցների վերահսկելի մուտքը եւ ելքը պահպանվող օբյեկտ.

ներօբյեկտային պայմանակարգ` պահպանվող օբյեկտի ներսում անվտանգության ապահովման կարգ եւ դրա իրականացմանն ուղղված միջոցառումների ամբողջություն:

ՀՈՐԿԱԾ 3. ԹԻԿՆԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ՊԱՀՆՈՐԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱՆԱՑՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՍՔԵՐԸ

1. Թիկնապահական եւ պահնորդական գործունեությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի, սույն օրենքի, այլ օրենքների եւ իրավական ակտերի հիման վրա:

2. Եթե վավերացված միջազգային պայմանագրերով սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են սույն օրենքով, ապա կիրառվում են միջազգային պայմանագրերով սահմանված նորմերը:

Հոդված 4. Օրենքի նպատակը

Օրենքի հիմնական նպատակներն են`

1) անձանց կյանքի, առողջության, գույքի պահպանությունը եւ պաշտպանությունը հակաիրավական ոտնձգություններից.

2) մասնավոր պահնորդական գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց աշխատանքային իրավունքների երաշխավորումը.

3) աջակցությունը պետությանը` հասարակական կարգի պաշտպանության, հասարակական անվտանգության ապահովման, հանցագործությունների նախականիման, կանխման եւ խափանման ոլորտներում.

4) պետական վերահսկողությունը մասնավոր պահնորդական գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց գործունեության նկատմամբ:

ՀՈՐԿԱԾ 5. ԹԻԿՆԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ՊԱՀՆՈՐԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԿԶՐՈՒՆՔՆԵՐԸ

1. Թիկնապահական եւ պահնորդական գործունեությունն իրականացվում է օրինականության, օրենքի առջեւ բոլորի հավասարության, մարդու եւ քաղաքացու իրավունքները, ազատություններն ու արժանապատվությունը, ֆիզիկական եւ իրավաբանական անձանց իրավունքները եւ օրինական շահերը հարգելու, պաշտպանվող ֆիզիկական անձի ու պահպանվող օբյեկտի պաշտպանությունը հուսալի եւ անվտանգ եղանակով իրականացնելու սկզբունքների հիման վրա:

ՀՈՐԿԱԾ 6. ԹԻԿՆԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ՊԱՀՆՈՐԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Թիկնապահական եւ պահնորդական գործունեության հիմնական խնդիրներն են`

1) ֆիզիկական անձանց (նրանց կողմից պայմանագրում նշված անձանց) կյանքի եւ առողջության պաշտպանության նպատակով թիկնապահական ծառայությունների մատուցումը.

2) իրավաբանական անձանց եւ անհատ ձեռնարկատերերի (նրանց կողմից պայմանագրում նշված անձանց) գույքի, գույքային իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության նպատակով պահնորդական ծառայությունների մատուցումը.

3) պահպանվող օբյեկտներում` սահմանված անցագրային եւ ներօբյեկտային պայմանակարգերի ապահովումը.

ՀՈՂԿԱԾ 7. ԹԻԿՆԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ՊԱՀՆՈՐԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

1. Թիկնապահական եւ պահնորդական գործունեությունն իրականացվում է տվյալ գործունեության լիցենզիա ստացած իրավաբանական անձանց կողմից՝ սույն օրենքով նախատեսված թիկնապահական եւ պահնորդական ծառայություններ մատուցելու միջոցով:

2. Թիկնապահական եւ պահնորդական գործունեությունն իրականացնելիս կարող են մատուցվել հետեւյալ ծառայությունները՝

1) ֆիզիկական անձի կյանքի եւ առողջության պաշտպանությունը՝ հակաիրավական ոտնձգություններից, այդ թվում՝ զենքի օգտագործմամբ.

2) սեփականության կամ օրինական տիրապետման ներքո գտնվող օբյեկտների, անշարժ եւ շարժական գույքի, տարածքի պահպանությունը.

3) պահպանվող օբյեկտներում անցագրային եւ ներօբյեկտային պայմանակարգերի ապահովումը.

4) հատուկ կապի եւ տրանսպորտային միջոցների տրամադրումը:

3. Թիկնապահական եւ պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպությունը պայմանագրով նախատեսված դեպքերում կարող է իրականացնել՝ նաեւ սպասարկում՝ հատուկ կապով եւ տրանսպորտային միջոցով:

4. Պաշտպանվող յուրաքանչյուր անձի կարող է ուղեկցել՝ միայն մեկ տրանսպորտային միջոց եւ երեքից ոչ ավելի թիկնապահ (այդ թվում՝ վարորդ- թիկնապահը):

5. Թիկնապահական եւ պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպությունն իրավունք չունի մատուցել թիկնապահական կամ պահնորդական ծառայություն պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձանց:

6. Թիկնապահական եւ պահնորդական ծառայություններ մատուցելիս թիկնապահները (պահնորդները) պետք է կրեն միասնական համազգեստ՝ միայն աշխատանքային ժամերին, որոնք պետք է տարբերվեն հատուկ պետական պաշտպանություն իրականացնող մարմնի աշխատողների համազգեստից:

Միասնական համազգեստի եւ տարբերանշանի նկարագիրը հաստատում է թիկնապահական եւ պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպությունը:

7. Թիկնապահական եւ պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպության ղեկավարները, թիկնապահները եւ պահնորդներն իրավունք չունեն պաշտոններ զբաղեցնել կամ աշխատել այն պաշտպանվող անձանց մոտ կամ պահպանվող օբյեկտներում, որոնց հետ թիկնապահական եւ պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպությունը կնքել է ծառայություններ մատուցելու պայմանագիր:

8. Սույն հոդվածի պահանջների չկատարումը հիմք է հանդիսանում տվյալ կազմակերպությանը թիկնապահական եւ պահնորդական գործունեության լիցենզիայի գործողության կասեցման կամ դադարեցման:

ՀՈՂԿԱԾ 8. ԹԻԿՆԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ՊԱՀՆՈՐԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՈՒՄԸ

1. Թիկնապահական եւ պահնորդական գործունեության լիցենզավորումն իրականացվում է «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ հաշվի առնելով սույն օրենքով նախատեսված առանձնահատկությունները:

2. Իրավաբանական անձինք իրավասու են զբաղվելու թիկնապահական եւ պահնորդական գործունեությամբ միայն լիցենզիայի առկայության դեպքում:

3. Թիկնապահական եւ պահնորդական գործունեության համար տրվում է բարդ ընթացակարգով լիցենզիա:

4. Թիկնապահական եւ պահնորդական գործունեությամբ զբաղվելու լիցենզիան տրվում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի կողմից:

5. Թիկնապահական եւ պահնորդական գործունեության լիցենզավորման, այդ թվում՝ լիցենզիայի տրման, լիցենզիայի գործողության ժամկետի երկարաձգման, վերաձեւակերպման, լիցենզիայի գործողության կասեցման կամ դադարեցման եւ այլ ընթացակարգերն իրականացվում են օրենքով սահմանված կարգով:

6. Մասնավոր պահնորդական կազմակերպությունները առետրային այլ գործունեությամբ զբաղվելու իրավունք չունեն:

ՀՈՐԿԱԾ 9. ԹԻԿՆԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ՊԱՀՆՈՐԴԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

1. Թիկնապահական եւ պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպության եւ պատվիրատուի միջեւ սույն օրենքով նախատեսված թիկնապահական եւ պահնորդական ծառայություններ մատուցելու մասին պայմանագիրը կնքվում է գրավոր, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված կարգով՝ սույն օրենքի պահանջներին համապատասխան:

2. Թիկնապահական եւ պահնորդական ծառայությունների մատուցման մասին կնքված պայմանագիրը, դրա կատարման հետ կապված տեղեկություններ պարունակող փաստաթղթերը եւ նյութերը ենթակա են պահպանման հինգ տարի ժամկետով՝ թիկնապահական եւ պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպությունում:

ՀՈՐԿԱԾ 10. ԹԻԿՆԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ՊԱՀՆՈՐԴԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԻՐԱՎԱՆԱՍՏՈՒՄՆԵՐԻ ՓԱՍՏԱԹԻՅԱԿՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ

1. Թիկնապահական եւ պահնորդական ծառայություններ մատուցելու ընթացքում արձանագրված իրավախախտման կամ իրավախախտումը կանխելու կամ իրավախախտին վնասագերծելու ընթացքում ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ կամ զենք գործադրելիս քաղաքացու կյանքին, առողջությանը կամ գույքին վնաս հասցնելու դեպքում թիկնապահը կամ պահնորդը պարտավոր է անհապաղ տեղյակ պահել իրավապահ մարմիններին եւ իր ղեկավարությանը:

2. Իրավախախտման ընթացքում հանցագործության հատկանիշներ հայտնաբերելու դեպքում թիկնապահը կամ պահնորդը պարտավոր է մինչեւ իրավապահ մարմինների աշխատակիցների ժամանումը հնարավոր միջոցներ ձեռնարկել հանցագործության դեպքի վայրի եւ հետքերի պահպանման ուղղությամբ, բացահայտի դեպքի ականատեսներին՝ արձանագրելով նրանց տվյալները:

3. Արձանագրված իրավախախտման եւ ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ փաստաթղթերը ենթակա են պահպանման հինգ տարի ժամկետով՝ թիկնապահական եւ պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպությունում:

ՀՈՐԿԱԾ 11. ԹԻԿՆԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ՊԱՀՆՈՐԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱՆԱՑՄԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ

1. Թիկնապահական եւ պահնորդական գործունեություն իրականացնելիս արգելվում է՝

1) թաքցնել նախապատրաստվող, կատարվող կամ կատարված հանցագործության փաստերը՝ անկախ պատվիրատուի շահերից.

2) իրականացնել իրավապահ մարմինների կամ պետական այլ մարմինների պաշտոնատար անձանց լիազորություններ.

3) խոչընդոտել իրավապահ մարմինների, այդ թվում՝ մաքսային, հարկային, անվտանգության ծառայության, ինչպես նաեւ այլ պետական մարմինների աշխատակիցների գործունեությանը.

4) օգտագործել եւ տարածել պաշտպանվող անձի վերաբերյալ իրեն հայտնի դարձած տեղեկությունները:

5) այլ անձանց փոխանցել իրեն ամրակցված զենքը, հատուկ կամ տեխնիկական միջոցները եւ սահմանված կարգով ստացած վկայականը:

6) պետական ռազմականացված կամ իրավապահ մարմինների տարբերանշաններով համազգեստի կրումը:

ՀՈՂԿԱԾ 12. ԹԻԿՆԱՊԱՀԻ ԵՎ ՊԱՀՆՈՐԴԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

1. Թիկնապահը եւ պահնորդն աշխատում են աշխատանքային պայմանագրի հիման վրա եւ նրանց վրա տարածվում են աշխատանքային օրենսդրության պահանջները:

2. Թիկնապահի եւ պահնորդի աշխատանքին հավակնող անձը, աշխատանքային պայմանագիր կնքելիս աշխատանքային օրենսդրությամբ նախատեսված փաստաթղթերի հետ մեկտեղ պարտավոր է ներկայացնել իր կողմից հատուկ պատրաստություն (որակավորում) անցնելը հավաստող փաստաթուղթ:

3. Թիկնապահի եւ պահնորդի կարգավիճակ ձեռք բերելու եւ թիկնապահական եւ պահնորդական գործառույթներ իրականացնելու (այդ թվում՝ զենքի օգտագործմամբ եւ հատուկ միջոցների գործադրմամբ) իրավունք ունեն Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիները, ովքեր ունեն թիկնապահի կամ պահնորդի որակավորում:

4. Թիկնապահի եւ պահնորդի կարգավիճակ ձեռք բերելու եւ թիկնապահական եւ պահնորդական գործառույթ իրականացնելու իրավունք չունեն այն անձինք, ովքեր՝

1) դատական կարգով ճանաչվել են անգործունակ կամ սահմանափակ գործունակ:

2) հոգեկան հիվանդության, հարբեցողության կամ թմրամոլության պատճառով հաշվառման են կանգնած բուժփմնարկներում:

3) դատապարտվել են դիտավորյալ հանցագործության համար եւ դատվածությունը սահմանված կարգով մարված կամ հանված չէ:

4) խուսափել են ժամկետային պարտադիր զինվորական ծառայությունից:

ՀՈՂԿԱԾ 13. ԹԻԿՆԱՊԱՀԻ ԵՎ ՊԱՀՆՈՐԴԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

1. Թիկնապահական կամ պահնորդական գործառույթներ իրականացնելիս թիկնապահը եւ պահնորդը իրավունք ունեն՝

1) պահպանվող օբյեկտի տարածքում գտնվող անձանցից պահանջել անցագրային ու ներօբյեկտային պայմանակարգերի պահանջների պահպանում:

2) պահպանվող օբյեկտում անցագրային ու ներօբյեկտային պայմանակարգերի պայմաններն ապահովելիս, իր իրավասության շրջանակներում, թիկնապահական եւ պահնորդական ծառայություններ մատուցելու մասին պայմանագրին համապատասխան, իրականացնել քաղաքացիների անձնական խուզարկություն, նրանց մոտ գտնվող առարկաների զննում, անձը հաստատող, ինչպես նաեւ պահպանվող օբյեկտ հետիոտն կամ տրանսպորտային միջոցով մուտքի եւ ելքի, գույք տեղափոխելու փաստաթղթերի ուսումնասիրություն:

3) վնասագերծել պաշտպանվող անձի կամ պահպանվող օբյեկտի, ինչպես նաեւ իր նկատմամբ ոտնձգություն կատարած անձին եւ վերջինիս հանձնել իրավապահ մարմիններին:

4) իրականացնել պահպանվող օբյեկտի տարծք մտնող եւ դուրս եկող տրանսպորտային միջոցների զննում,

5) սույն օրենքով նախատեսված դեպքերում եւ կարգով կիրառել ֆիզիկական ուժ, զենք, հատուկ կամ տեխնիկական միջոցներ:

2. Թիկնապահի կամ պահնորդի կողմից ֆիզիկական եւ իրավաբանական անձանց օրինական իրավունքների եւ ազատությունների խախտումը հանգեցնում է օրենքով սահմանված պատասխանատվության:

Հոդված 14. Պահնորդի (թիկնապահի) համազգեստը, վկայականը, զենքը, հատուկ եւ տեխնիկական միջոցները

1. Պահնորդական կազմակերպությունը պարտավոր է պահնորդին (թիկնապահին) տրամադրել հատուկ համազգեստ, անձը հաստատող վկայական, զենք, հատուկ եւ տեխնիկական միջոցներ:

2. Հատուկ համազգեստը տեսանելի կերպով պարունակելու է կամ նրան փակցվելու է պահնորդի (թիկնապահի) անունը, ազգանունը եւ պահնորդական կազմակերպության ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը:

3. Պահնորդը իրավունք չունի համազգեստ կրել չգտնվելով պարտականությունների կատարման մեջ, բացառությամբ մասնավոր պահնորդական կազմակերպության շենքում կամ նրա հարակից տարածքում գտնվելու դեպքերի: Իր պարտականությունները կատարելիս պահնորդը պարտավոր է կրել համազգեստ: Այս պարտականությունից ազատվում են միայն թիկնապահները՝ սույն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված ծառայության մատուցումն ապահովող պարտականությունները կատարելիս:

4. Իրենց պարտականությունները կատարելիս պահնորդները (թիկնապահները) կարող են օգտագործել միայն պահնորդական կազմակերպության սեփականությունը հանդիսացող կամ օրինական տիրապետման տակ գտնվող զենքը, հատուկ եւ տեխնիկական միջոցները: Տրանսպորտային միջոցի վրա տեսանելի կերպով պետք է պատկերված լինի կազմակերպության անվանումը, ապրանքային նշանը, կազմակերպության հեռախոսահամարները:

5. Արգելվում է տրանսպորտային միջոցը կահավորել առկայծող փարոսիկներով կամ հատուկ ծայնային ազդանշան արձակող սարքավորումներով:

Հոդված 15. Մասնավոր պահնորդական կազմակերպությունների զենքը

Մասնավոր պահնորդական կազմակերպությունը պահնորդական ծառայություններ մատուցելու նպատակով զենք ձեռք բերում եւ օգտագործում է հատուկ կանոնադրական խնդիրներ իրականացնող իրավաբանական անձանց համար «Ձենքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

Հոդված 16. Մասնավոր պահնորդական կազմակերպության հատուկ միջոցները

1. Մասնավոր պահնորդական կազմակերպությունը պահնորդական ծառայություններ իրականացնելիս իրավունք ունի օգտագործել ռետինե մահակներ, ձեռնաշղթաներ, տրանսպորտային միջոցը հարկադիր կանգնեցնելու միջոցներ, պահնորդական շներ:

2. Յուրաքանչյուր մասնավոր պահնորդական կազմակերպության կողմից օգտագործվող հատուկ միջոցների տեսակը քանակը սահմանվում է ոստիկանության պետի հրամանով՝ հիմք ընդունելով հատուկ միջոցների գործադրման պատրաստություն անցած պահնորդների (թիկնապահների) թիվը:

3. Հատուկ միջոցների մարտավարական գործադրման կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի հրամանով:

Հոդված 17. Մասնավոր պահնորդական կազմակերպության տեխնիկական միջոցները

1. Մասնավոր պահնորդական կազմակերպությունը պահնորդական ծառայություններ մատուցելիս իրավունք ունի օգտագործել պահպանության եւ այլ տեխնիկական միջոցներ: Արգելվում է այնպիսի տեխնիկական միջոցների օգտագործումը, որոնք՝

- 1) կարող են վնաս պատճառել քաղաքացիների կյանքին եւ առողջությանը կամ շրջակա միջավայրին.
- 2) նախատեսված (մշակված, հարմարեցված, ծրագրավորված) են տեղեկատվության գաղտնի ձեռք բերման համար.
2. Տեխնիկական միջոցների օգտագործումը չպետք է խախտի քաղաքացիների իրավունքներն ու ազատությունները:
3. Թիկնագորային գործունեություն իրականացնելիս թույլատրվում է օգտագործել ռադիոհաձայնակալության տիրույթներ, որոնց տրամադրման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 18. Ֆիզիկական ուժ, զենք, հատուկ միջոցներ գործադրելու հիմքերը, պայմանները եւ սահմանները

1. Իր պարտականությունները կատարելիս պահնորդը (թիկնապահը) ֆիզիկական ուժ, զենք, հատուկ կամ տեխնիկական միջոցներ գործադրելու իրավունք ունի միայն անհրաժեշտ պաշտպանության եւ ծայրահեղ անհրաժեշտության պայմաններում, ինչպես նաեւ՝ ոտնձգություն կատարած անձին վնասազերծելիս՝ սույն օրենքով նախատեսված դեպքերում ու կարգով:
2. Պահնորդները (թիկնապահները) ոստիկանության պետի հրամանով՝ սահմանած կարգով պարտավոր են պարբերաբար անցնել ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների եւ հրազենի գործադրման անհրաժեշտություն առաջացնող իրադրություններում գործելու պիտանիությունը որոշող ստուգումներ:
3. Ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների, հրազենի գործադրման ընտրությունը կատարելիս պահնորդը (թիկնապահը) առաջնորդվում է ելնելով ստեղծված իրավիճակից եւ ոտնձգության բնույթից՝ ղեկավարվելով պահպանվող օբյեկտի կամ պահմանվող անձի պաշտպանությունը առավել հուսալի եւ անվտանգ եղանակով իրականացնելու անհրաժեշտությամբ:
4. Պահնորդը (թիկնապահը) ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ կամ հրազեն գործադրելուց առաջ պարտավոր է նախազգուշացել դրանք գործադրելու մասին՝ բավարար ժամանակ տրամադրելով իր օրինական պահանջները կատարելու եւ ոտնձգությունը դադարեցնելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանց գործադրման հապաղումն անմիջական սպառնալիք է ստեղծում պահպանվող անձի կամ կամ իր կյանքի ու առողջության համար, կամ կարող է առաջացնել այլ ծանր հետեւանքներ, կամ երբ ստեղծված իրավիճակում այդպիսի նախազգուշացումն անհնար է:
5. Պահնորդը (թիկնապահը) պարտավոր է նաեւ՝
 - 1) ելնելով ոտնձգության բնույթից՝ ձգտել, որպեսզի ոտնձգություն կատարած անձին պատճառվող վնասը հասցվի նվազագույնի.
 - 2) անհապաղ ապահովել (ցուցաբերել) առաջին բուժօգնություն այն անձանց, ում առողջությանը պատճառվել է վնաս.
 - 3) ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների կամ հրազենի գործադրմամբ անձին պատճառած մարմնական վնասվածքի կամ մահվան դեպքում անհապաղ տեղեկացնել իր ղեկավարին:
6. Օրենքով չնախատեսված դեպքերում կամ սահմանների անցումով թիկնապահի կողմից ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների կամ հրազենի գործադրումը առաջացնում է պատասխանատվություն՝ օրենքով սահմանված կարգով:

19. Ֆիզիկական ուժի գործադրումը

Պահնորդը (թիկնապահը) իրավունք ունի ֆիզիկական ուժ (այդ թվում՝ ձեռնամարտի հնարքներ) գործադրել պահպանվող անձի կամ օբյեկտի նկատմամբ ոտնձգությունը կանխելիս, դրանք կատարած անձանց վնասազերծելիս, ինքնապաշտպանության, ինչպես նաեւ այն դեպքերում, երբ առանց ֆիզիկական ուժ գործադրման հնարավոր չէ ապահովել իր պարտականությունների օրինական եւ իրավաչափ կատարումը:

Հոդված 20. Հատուկ միջոցների գործադրումը

1. Պահնորդը (թիկնապահը) հատուկ միջոցներ կարող է գործադրել հետևյալ դեպքերում.

1) իր կամ պահպանվող անձի կյանքին եւ առողջությանն անմիջականորեն սպառնացող հարձակումը խափանելիս.

2) իր կամ պահպանվող անձի (գույքի) դեմ ուղղված հարձակումը կանխելիս, երբ հարձակվողը ցույց է տալիս ֆիզիկական դիմադրություն.

3) պահպանվող օբյեկտ մուտք գործելու փորձ կատարող տրանսպորտային միջոցը կանգնեցնելու անհրաժեշտությունից ելնելով, եթե վարորդը չի կատարում մեքենան կանգնեցնելու վերաբերյալ պահնորդի (թիկնապահի) օրինական պահանջը.

4) պահնորդի (թիկնապահի) հատուկ միջոցներին տիրանալու փորձը կանխելիս:

2. Արգելվում է հատուկ միջոցների գործադրումը հղիության նկատելի նշաններ ունեցող կանանց, հաշմանդամների, անչափահասների նկատմամբ, եթե նրանց տարիքն ակնհայտ է կամ հայտնի է պահնորդին (թիկնապահին) , բացառությամբ նրանց կողմից զինված դիմադրություն ցույց տալու, պահնորդի (թիկնապահի) կամ պահպանվող այլ անձի կյանքին կամ առողջությանը, պահպանվող օբյեկտի անվտանգությանը սպառնացող զինված կամ խմբակային այլ հարձակումը կանխելու դեպքերի:

3. Անհրաժեշտ պաշտպանության կամ ծայրահեղ անհրաժեշտության պայմաններում հատուկ միջոցների բացակայության դեպքում պահնորդը (թիկնապահը) իրավունք ունի օգտագործել ձեռքի տակ եղած բոլոր հնարավոր միջոցները:

Հոդված 21. Հրազենի գործադրումը

1. Պահնորդը (թիկնապահը) իրավունք ունի զենք գործադրել հետևյալ դեպքերում`

1) անհրաժեշտ պաշտպանության կամ ծայրահեղ անհրաժեշտության պայմաններում` իր կամ պահպանվող անձի կամ պահպանվող օբյեկտի վրա կատարվող վտանգավոր, խմբակային կամ այլ զինված հարձակումը կանխելիս, եթե զենք չգործադրելը կարող է անմիջական վտանգ ստեղծել նրա, պահպանվող անձի կյանքի եւ առողջության կամ պահպանվող գույքի համար.

2) պահպանվող օբյեկտ մուտք գործելու փորձ կատարող տրանսպորտային միջոցը վնասելով կանգնեցնելիս, եթե վարորդը չի կատարում մեքենան կանգնեցնելու վերաբերյալ պահնորդի (թիկնապահի) օրինական պահանջը.

3) մարդկանց կյանքին եւ առողջությանն անմիջականորեն սպառնացող կենդանիներին վնասազերծելիս.

4) պահնորդի (թիկնապահի) զենքին տիրանալու փորձը կանխելիս.

5) զենքի գործադրման մտադրության մասին նախազգուշական կրակոց արձակելիս, տազնապ հայտարարելիս կամ օգնության կանչելիս:

2. Արգելվում է հրազենի գործադրումը հղիության նկատելի նշաններով կանանց, ակնհայտ հաշմանդամների եւ անչափահասների նկատմամբ (բացառությամբ նրանց կողմից զինված դիմադրություն ցույց տալու, պահնորդի (թիկնապահի) կամ պահպանվող անձի կյանքին եւ առողջությանը, պահպանվող օբյեկտի անվտանգությանը սպառնացող զինված կամ խմբակային այլ հարձակումը կանխելու դեպքերի):

3. Ջենքի յուրաքանչյուր գործադրման դեպքում պահնորդը պարտավոր է այդ մասին անհապաղ տեղեկացնել տվյալ վայրի լիազոր մարմնի ստորաբաժանմանը եւ իր վերադասին:

ՀՈՂԿԱԾ 22. ԹԻԿՆԱՊԱՀԻ ԵՎ ՊԱՀՆՈՐԴԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՌԻՍԻՑՈՒՄԸ, ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ, ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ

1. Թիկնապահի եւ պահնորդի մասնագիտական ուսուցումը, վերապատրաստումը, որակավորումը եւ որակավորման բարձրացումն իրականացնում են իրավաբանական անձ հանդիսացող եւ համապատասխան կրթական գործունեության լիցենզիա ունեցող հաստատությունները:

2. Թիկնապահի եւ պահնորդի որակավորման ստուգման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

3. Թիկնապահները եւ պահնորդներն առնվազն երեք տարին մեկ անգամ պարտավոր են անցնել պարտադիր վերապատրաստում, որի կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

ՀՈՂԱԾ 23. ԹԻԿՆԱՊԱՀԿԱՆ ԵՎ ՊԱՀՆՈՐԴԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԳՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԱՎԱՊԱՀ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԱՅԼ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՏ ԻՐԱՎԱԿԱՐԳԻ ՊԱՀՊԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆԿՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՂՎՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

1. Իրավապահ մարմինների հետ համագործակցության ընթացքում թիկնապահական եւ պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպությունների աշխատանքներն իրականացվում են հետեւյալ հիմնական ուղղություններով.

1) պետության անվտանգության ապահովում.

2) իրավակարգի պահպանում.

3) քաղաքացիների իրավունքների եւ օրինական շահերի պաշտպանության ապահովում.

4) հետախուզման մեջ գտնվող անձանց հայտնաբերում:

2. Իրավապահ մարմինների հետ համագործակցությունն իրականացվում է համաձայնագրերի հիման վրա՝ տեղեկատվության փոխանակման, օրենսդրությամբ նախատեսված համատեղ կամ համաձայնեցված միջոցառումների անցկացման միջոցով:

3. Իր իրավասության շրջանակներում Լիազոր մարմինը կազմակերպում է անվտանգության ապահովման պետական մարմինների հետ համագործակցությունը եւ համակարգում է նրանց գործունեությունը պետական պահպանության ոլորտում:

4. Արտակարգ իրավիճակներում թիկնապահական եւ պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպությունն իրավապահ մարմինների նախաձեռնությամբ կարող է ներգրավել համապատասխան միջոցառումների իրականացմանը՝ ծառայությունների մատուցման մասին պայմանագրին համապատասխան:

Հոդված 24. Իրավապահ մարմինների աջակցությունը մասնավոր պահնորդական կազմակերպություններին

1. Իրավապահ մարմինները պարտավոր են աջակցություն ցույց տալ մասնավոր պահնորդական կազմակերպություններին՝ օրենքով նրանց վերապահված իրավունքների իրականացման առիթով՝ կազմակերպության իրավունքների կամ օրինական շահերի նկատմամբ հակաիրավական ոտնձգություններ կատարելու դեպքերում:

2. Աջակցությունը դրսևորվում է կատարված իրավախախտումների դեպքերին օպերատիվ արձագանքելու, անհրաժեշտության դեպքում կազմակերպության եւ նրա աշխատակիցների գույքը, նրանց եւ նրանց ընտանիքի անդամների պաշտպանությունը ապահովելու եւ օրենքով նախատեսված այլ եղանակներով:

Հոդված 25. Սոցիալական պաշտպանության երաշխիքները

1. Պահնորդի (թիկնապահի) կյանքն ու առողջությունը ապահովագրվում է գործատուի հաշվին:

2. Պահնորդի (թիկնապահի) ապահովագրավճարը լրիվ ծավալով մտնում է պահնորդական ծառայությունների ինքնարժեքի մեջ:

Հոդված 26. Պահնորդների (թիկնապահների) արհեստակցական միությունը

1. Պահնորդները (թիկնապահները) իրենց աշխատանքային ու դրա հետ կապված սոցիալական ու այլ շահերը ներկայացնելու ու պաշտպանելու եւ օրենքով նախատեսված այլ նպատակներով կարող են ստեղծել արհեստակցական միություն:

2. Արհեստակցական միության անկախությունը երաշխավորվում է օրենքով:

ՀՈՂՎԱԾ 27. ԹԻԿՆԱՊԱՀԻ ԵՎ ՊԱՀՆՈՐԴԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

1. Թիկնապահը եւ պահնորդը չեն կարող հետապնդվել եւ պատասխանատվության ենթարկվել օրենքով սահմանված իրենց պարտականությունների եւ գործողությունների կատարման համար:

2. Թիկնապահական եւ պահնորդական ծառայություններ մատուցող անձանց նկատմամբ իրենց ծառայողական պարտականությունները կատարելիս դիմադրություն ցույց տալը, սպառնալիքը կամ բռնությունն առաջացնում են օրենքով սահմանված պատասխանատվություն:

ՀՈՂՎԱԾ 28. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԹԻԿՆԱՊԱՀԻ ԵՎ ՊԱՀՆՈՐԴԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՎԱԾՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽՔՆԵՐԸ ՉՊԱՀՊԱՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ

1. Սույն օրենքով նախատեսված թիկնապահի եւ պահնորդի սոցիալական եւ իրավական պաշտպանության երաշխիքները չպահպանելն առաջացնում է օրենքով սահմանված պատասխանատվություն:

ՀՈՂՎԱԾ 29. ԹԻԿՆԱՊԱՀԻ ԵՎ ՊԱՀՆՈՐԴԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

1. Թիկնապահը կամ պահնորդն իրենց պարտականություններն անհարգելի պատճառով չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու եւ սույն օրենքով սահմանված լիազորությունների սահմանն անցնելու դեպքերում ենթարկվում է պատասխանատվության՝ Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

2. Թիկնապահի կամ պահնորդի անօրինական գործողության կամ անգործության

հետեւանքով կազմակերպություններին եւ քաղաքացիներին պատճառված վնասը ենթակա է փոխհատուցման՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրությանը համապատասխան:

3. Թիկնապահի կամ պահնորդի անօրինական գործողությունները կարող են բողոքարկվել վերադասության կարգով կամ դատական կարգով:

ՀՈՂՎԱԾ. 30 ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԹԻԿՆԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ՊԱՀՆՈՐԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՏԱՍՐ

1. Մասնավոր պահնորդական կազմակերպությունների սույն օրենքով նախատեսված գործունեությանն նկատմամբ հսկողություն իրականացնում է ոստիկանությունը:

2. Ոստիկանությունը հսկողությունն իրականացնում է լիցենզավորման մասին եւ զենքի մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, ինչպես նաեւ այլ իրավական ակտերով նախատեսված իր լիազորություններ շրջանակում:

3. Լիցենզավորման մասին եւ զենքի մասին օրենսդրությամբ եւ սույն օրենքի պահանջների կատարման նկատմամբ պետական վերահսկողություն իրականացնելիս ոստիկանությունն իրավունք ունի մասնավոր պահնորդական կազմակերպությունում, ինչպես նաեւ պահնորդական ծառայություններ մատուցելու վայրում (պատվիրատուների համաձայնությամբ) իրականացնել ստուգումներ՝ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման եւ անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

Հոդված 31. Պատասխանատվության միջոցները

Մասնավոր պահնորդական կազմակերպությունների նկատմամբ օրենքի եւ այլ իրավական ակտերի պահանջները խախտելու համար կարող են կիրառվել պատասխանատվության հետեւյալ միջոցները՝

- 1) նախազգուշացում եւ խախտումը վերացնելու հանձնարարական.
- 2) լիցենզիայի գործողության կասեցում.
- 3) լիցենզիայի գործողության դադարեցում:

Հոդված 32. Նախազգուշացումը եւ խախտումը վերացնելու հանձնարարականը

1. Նախազգուշացմամբ արձանագրվում է խախտումը եւ այդ մասին տեղեկացվում մասնավոր պահնորդական կազմակերպությանը:

2. Նախազգուշացումը նախատեսում է կատարված խախտումը ուստիկանության սահմանված ժամկետում վերացնելու կամ ապագայում նման խախտումը կանխելուն ուղղված միջոցառումներ իրականացնելու հանձնարարական, որը պարտադիր կատարման ենթակա վարչական ակտ է:

3. Նախազգուշացումը կարող է կիրառվել, երբ տվյալ իրավախախտման համար լիցենզիայի գործողության կասեցում կամ լիցենզիայի գործողության դադարեցում նախատեսված չէ:

Հոդված 33. Լիցենզիայի գործողության կասեցումը

Մասնավոր պահնորդական կազմակերպության լիցենզիայի գործողությունը կարող է կասեցվել «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերում, ինչպես նաեւ՝ սույն օրենքով նախատեսված նախազգուշացումը վարչական ակտով սահմանված ժամկետներում չկատարելու դեպքում:

Հոդված 34. Լիցենզիայի գործողության դադարեցումը

1. Մասնավոր պահնորդական կազմակերպության լիցենզիայի գործողությունը կարող է դադարեցվել «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված պահանջները չկատարելու, ինչպես նաեւ՝ սույն օրենքի 8-րդ եւ 25-րդ հոդվածներով նախատեսված դեպքերում:

2. Մասնավոր պահնորդական կազմակերպության լիցենզիայի գործողությունը դադարեցվում է նաեւ լիցենզիա ստանալուց հետո մեկ տարվա ընթացքում պահնորդական ծառայություններ չիրականացնելու, ինչպես նաեւ՝ զենքի շրջանառության կանոնների խախտումների այնպիսի դեպքերում, որոնք հանգեցրել են զենքի կորստին, հափշտակությանը կամ հանցավոր նպատակներով օգտագործմանը կամ վնաս են պատճառել մարդու առողջությանը կամ հանգեցրել այլ ծանր հետեւանքների:

3. Լիցենզիայի գործողության դադարեցումը մասնավոր պահնորդական կազմակերպությանը տրված զենք պահելու եւ օգտագործելու թույլտվությունը վաղաժամկետ ուժը կորցրած ճանաչելու իրավական հիմք է:

ՀՈԴՎԱԾ 35. ՕՐԵՆՔԻ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2013 թվականի հունվարի 1-ից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԺ կողմից 06.12.2011թ. առաջին ընթերցմամբ ընդունված <<Մասնավոր պահնորդական գործունեության մասին>>, <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> ՀՀ օրենսգրքում լրացումներ կատարելու վերաբերյալ, <<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին << Պետական տուրքի մասին << օրենքում լրացում կատարելու մասին>> ՀՀ օրենքի նախագծերի վերաբերյալ ներկայացված առաջարկությունների:

Առաջարկության հեղինակը	Հոդվածը, կետը, ենթակետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկությունը	Եզրակացությունը
ՀՀ Կառավարություն	Հոդված 2	<< Պաշտպանվող անձ>> հասկացությունը խմբագրել՝ նկատի ունենալով այն, որ կարող են լինել դեպքեր, երբ անձը համապատասխան իրավաբանական անձանց հետ պայմանագիր կնքի ոչ միայն իր կյանքի և առողջության պաշտպանության նպատակով, այլև երրորդ անձի:	Առաջարկությունը ընդունվել է և շարադրվել է նոր խմբագրությամբ:
ՀՀ Կառավարություն	Հոդված 10, առաջին մաս	<<Ձերբակալելու>> բառը փոխարինել << վնասագերծելու>> բառով	Առաջարկությունը ընդունվել է:
ՀՀ Կառավարություն	Հոդված 12, 3-րդ մաս	Հանել <<25 տարին լրացած>> բառերը	Առաջարկությունը ընդունվել է:
ՀՀ Կառավարություն	Հոդված 16	Պարզաբանել << Տրանսպորտային միջոցը հարկադիր կանգնեցնելու միջոցներ>> հասկացությունը:	Առաջարկությունը ընդունվել է և նույն հոդվածի երկրորդ մասը շարադրվել է նոր խմբագրությամբ:
ՀՀ Կառավարություն	Հոդված 20, 2-րդ մաս	Վերջում լրացնել << Բացառությամբ նրանց կողմից զինված դիմադրություն ցույց տալու, պահնորդի (թիկնապահի) կամ պահպանվող այլ անձի կյանքին կամ առողջությանը, պահպանվող օբյեկտի անվտանգությանը սպառնացող զինված կամ խմբակային այլ հարձակումը կանխելու դեպքերի>> բառերով:	Առաջարկությունը ընդունվել է:
ՀՀ Կառավարություն	Հոդված 22, առաջին մաս	<< Կրթական>> բառից առաջ ավելացնել <<Համապատասխան>> բառը:	Առաջարկությունը ընդունվել է:
ՀՀ Կառավարություն	Հոդված 25, առաջին մաս	Առաջին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.<<Պահնորդի (թիկնապահի) կյանքն ու առողջությունը ապահովագրվում է գործատուի հաշվին>>	Առաջարկությունը ընդունվել է:
ՀՀ Կառավարություն	Հոդված 30, 2-րդ մաս	<<Օրենսդրությամբ>> բառից հետո	Առաջարկությունը ընդունվել է:

		լրացնել<<Ինչպես նաև այլ իրավական ակտերով>> բառերը:	
ՀՀ Կառավարություն	Հոդված 34, առաջին մաս	<< Նախատեսված>> բառից հետո լրացնել <<Պահանջները չկատարելու>> բառերը	Առաջարկությունը ընդունվել է:
ՀՀ Կառավարություն	Հոդված 23	Հստակեցնել համակարգող խորհուրդների կարգավիճակը	Առաջարկությունը ընդունվել է, 23-րդ հոդվածի 3-րդ մասը հանվել է:
ՀՀ ԱԺ ՊԱԱՆԳ հանձնաժողով		Նախագծում անհրաժեշտ է նախատեսել անցումային դրույթներ	Առաջարկությունը ընդունվել է և 35-րդ հոդվածը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ՝ <<Սույն օրենքը ուժի մեջ է մտնում 2013 թվականի հունվարի 1-ից>>:
ՀՀ Կառավարություն		<< Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին>> ՀՀ օրենքի նախագծի 2-րդ հոդվածը համապատասխանեցնել<<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջին:	Առաջարկությունը ընդունվել է, 2-րդ մասը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ՝ <<Սույն օրենքը ուժի մեջ է մտնում 2013 թվականի հունվարի 1-ից>>:
ՀՀ Կառավարություն		<<Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում լրացումներ կատարելու մասին>> ՀՀ օրենքի նախագծով լրացվող հոդվածի համարակալումը վերանայել՝ նկատի ունենալով այն, որ օրենսգրքում արդեն իսկ առկա է 169.18 հոդվածը:	Առաջարկությունը ընդունվել է և 169.18 հոդվածը փոխարինվել է 169.23 հոդվածով: